



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ**

No 1021-26/ԳՔ

« 07 » 08 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՐԶԱՌԱԶՄԱԿԱՆ և ԱՐՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010թ. ՄԱՅԻՍԻ 10-Ի N 334-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին >> թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված նախարարության կանոնադրության 31-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտառուսումնական դաստիարակության վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2010թ. մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտառուսումնական դաստիարակության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N334-Ա/Ք հրամանը:

Նախարար

/ Ա. ԱՇՈՏՅԱՆ

Aug 7 2013 2:42 PM

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչություն

### I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչությունը /այսուհետ՝ վարչություն/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որը մշակում և իրականացնում է հանրակրթական լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության՝ անկախ արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների կազմակերպչական և սեփականության ձևից, /ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների, զորահավաքային, ՔՊ և արտակարգ իրավիճակների նախապատրաստության/ համակարգի պետական միասնական քաղաքականություն, ապահովում դրա մշակման, կենսագործման, համակարգման և վերահսկման աշխատանքները:

2. Վարչության կանոնադրությունը հաստատում է նախարարը:

3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՀ կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ կանոնադրությամբ, հրամաններով, հանձնարարականներով, այլ նորմատիվ ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Վարչության նպատակներն ու խնդիրներն են՝

1) կրթության բնագավառում /հանրակրթական լրացուցիչ կրթության ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն/ միասնական քաղաքականության մշակումը, դրա իրականացման և վերահսկողության ապահովումը,

2) հանրակրթական լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության /անկախ իրավակազմակերպական ձևից և ենթակայությունից/, ուսումնական հաստատությունների ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների, դաստիարակության վերաբերյալ աշխատանքների ցույց տրվող մեթոդական օգնության աշխատանքների համակարգումը և դրանց գործունեության վերահսկողության ապահովումը,

3) ուսումնասիրությունների միջոցով ուսումնական և հանրակրթական լրացուցիչ կրթություն իրականացնող հաստատություններում սովորողների դաստիարակության հիմնախնդիրների բացահայտումը, վերլուծությունը, ինչպես նաև հետադարձ կապի ապահովումը,

4) ոչ պետական հանրակրթական լրացուցիչ կրթություն այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության իրականացնող հաստատությունների ցանցի ընդլայնմանն ու զարգացմանն աջակցելը:

## II. Վարչության գործառույթները

5. Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և նախարարության կանոնադրության համաձայն, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) դաստիարակության, ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների, հանրակրթական լրացուցիչ կրթության այդ թվում արտադպրոցական դաստիարակության բնագավառին առնչվող կրթության զարգացման պետական ծրագրի, պետական կրթական չափորոշիչների մշակում և դրանց իրականացման աշխատանքների համակարգում

2) մշակում է հանրակրթական լրացուցիչ կրթության համակարգի, ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների վերաբերյալ պետական քաղաքականության, իրավական նորմատիվ ակտերի, գերատեսչական ակտերի նախագծերը

3) հանրակրթական լրացուցիչ կրթություն այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների, զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակում

4) կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի, պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման, քննարկման և դրանց իրականացմանը սահմանված կարգով մասնակցություն

5) լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճների և ՆՁՊ դասասենյակների նյութատեխնիկական հագեցվածության չափաքանակների, ուսումնադիդակտիկ հագեցվածության, գեղարվեստական, տեղեկատվական և այլ գրականության չափաքանակների մշակում

6) կրթության ոլորտում կառավարման իրավասություն ունեցող՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կրթության կառուցվածքային ստորաբաժանումների հետ կազմակերպում է հանրակրթական լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների մանկավարժական և ղեկավար կադրերի ատեստավորման և որակավորման գործընթացի աշխատանքները:

7) կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու մասին հայտի հիման վրա հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու նպատակով տեղում ուսումնասիրությունների իրականացում սահմանված կարգով մասնակցություն

8) այլ գերատեսչությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սովորողների ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն, արտակարգ իրավիճակներ, դաստիարակչական բնույթի միջոցառումների, հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպում

9) պետական կառավարման լիազոր մարմնի հետ համագործակցությամբ սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ցույց տրվելիք օգնության, սփյուռքում հայապահպան կրթական գործունեության, Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեությանը սփյուռքի մասնակցության ծրագրերի մշակում և մոնիթորինգի իրականացմանն սահմանված կարգով մասնակցություն

10) կրթության զարգացման պետական ծրագրի մշակում և դրա իրականացման աշխատանքների համակարգմանը սահմանված կարգով մասնակցություն

11) ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների պետական կրթական չափորոշիչների մշակում և դրանց իրականացման աշխատանքների համակարգում

12) պետական ռազմավարական ծրագրերի շրջանակներում կրթության ոլորտի ծրագրերի իրականացման կազմակերպմանը սահմանված կարգով մասնակցություն

13) ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակման ու հրատարակման ապահովում ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգերի մշակմանը և հաստատմանը սահմանված կարգով մասնակցություն

14) «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն դաստիարակ», «Լավագույն տնօրեն» ամենամյա մրցույթի, Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման կարգերի մշակում և հաստատում. սահմանված կարգով մասնակցություն

15) կրթության և գիտության բնագավառներում պետական պարգևների ներկայացման և գերատեսչական պարգևների շնորհման աշխատանքներին սահմանված կարգով մասնակցություն

16) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը սահմանված կարգով մասնակցություն.

17) նախարարության և նրա համակարգի բյուջետային գործընթացի ապահովմանը սահմանված կարգով մասնակցություն

18) հանրակրթական լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների որակի և արդյունավետության մոնիտորինգ, այդ բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատում

19) հանրակրթական լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության զարգացման ապահովում, լրացուցիչ հանրակրթական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների նկատմամբ մոնիտորինգի իրականացում

20) համակարգի կազմակերպությունների զորահավաքային, ՔՊ և արտակարգ իրավիճակների նախապատրաստության հեռանկարային և տարեկան պլանների, ծրագրերի մշակում և դրանց իրականացման համակարգում:

21) նախարարությունում ստացված լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության և դաստիարակության, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրա և նախնական զինվորական պատրաստության վերաբերյալ դիմումների, գանգատների, նամակների և առաջարկությունների քննարկում և դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանի պատրաստում

22) Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, նախարարության կանոնադրությամբ սահմանված, այլ լիազորությունների իրականացում:

### **III. Վարչության աշխատանքի կազմակերպումը**

6. Վարչությունը կազմված է՝

- 1) արտաուսումնական դաստիարակության բաժին
- 2) մարզառազմական դաստիարակության բաժին

7. Վարչության աշխատանքի ոլորտում են տարրական, միջին, ավագ, հատուկ դպրոցները և նախնական կրթական ծրագրեր իրականացնող և բոլոր տիպի ուսումնական

հաստատությունները՝ անկախ իրավական, կազմակերպական ձևից և գերատեսչական պատկանելիությունից:

8. Վարչությունն իր գործունեությունը իրականացնում է նախարարության ընթացիկ և հեռանկարային ծրագրերին համապատասխան:

9. Վարչությունը իր աշխատանքը կազմակերպում է սույն կանոնադրությամբ նախատեսված իրավասությունների շրջանակներում:

10. Վարչությունը մարզային և համայնքային ենթակայության ուսումնական հաստատությունների ղեկավարումն իրականացնում է մարզպետարանների կրթության վարչությունների /բաժինների/ և համայնքների միջոցով, որոնց համար պարտադիր է նախարարության ցուցումների, գիտամեթոդական և մյուս նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարումը:

11. Վարչությունը որպես նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում, կարող է իր կանոնադրական խնդիրների և գործառույթներից բխող փաստաթղթեր ստանալ նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից, մարզպետարանների /երևանի քաղաքապետարանի/ համապատասխան ստորաբաժանումներից, հանրակրթական հաստատություններից, ինչպես նաև տալ պատվեր՝ համապատասխան տվյալներ պարունակող տեղեկանքներ կազմելու համար:

12. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետը հաշվետու է աշխատակազմի ղեկավարին և ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

14. Վարչության պետը՝

ա/ վարչության աշխատողների /մասնագետների/ միջև կատարում է աշխատանքի բաժանում, սահմանում է նրանց պարտականությունների ոլորտը և պատասխանատվության աստիճանը

1) հաստատումն է ներկայացնում վարչության կանոնադրության նախագիծը, աշխատանքային ծրագրերը, վարչությունում մշակված փաստաթղթերի նախագծերը

2) խրախուսանքի և կարգապահական տույժի է ներկայացնում վարչության աշխատողների և նախարարության ենթակայության հաստատությունների ղեկավարներին

3) իր իրավասությունների և վարչության գործառույթների շրջանակներում տալիս է ցուցումներ, հանձնարարականներ և առաջարկներ՝ վերահսկում դրանց կատարումը

4) մասնակցում է նախարարության աշխատանքային խորհրդակցություններին, ուսումնագիտական և այլ խորհուրդների, հանձնախմբերի աշխատանքներին

5) պարբերաբար նախարարության ղեկավարությանը հաշվետվություն է ներկայացնում վարչության գործունեության մասին

6) իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

15. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները /համաձայն պաշտոնի անձնագրի/ դրվում է բաժնի պետերից որևէ մեկի վրա:

16. Վարչության ընթացիկ գործունեության կառավարումն իրականացնում է նախարարի տեղակալը:

17. Վարչության աշխատակիցների լիազորությունները սահմանված են քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով: